

**Երևանի Դավթաշեն համայնքում իրականացվող կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ծրագիր**

***Ծրագրի նախապատմությունը***

2006 թ. հունիս	ՌԴ «ՄԷՊ-ինվեստ» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարան ու ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով է ներկայացվել Դավթաշեն համայնքում համակցված արտադրության տեղակայանքի կիրառմամբ կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ներդրումային ծրագրերի տեխնիկատնտեսական հիմնավորում, որն արժանացել է այդ գերատեսչությունների հավանությանը:
2006թ. օգոստոսի 3	Երևանի քաղաքապետարանին հանձնարարվեց Դավթաշեն համայնքի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի գույքն անհատույց օգտագործման հանձնել թաղային համայնքին՝ դրանք հետագայում համատեղ ստեղծվող առևտրային ընկերության փոխանցելու նպատակով ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 30 և օգոստոսի 31-ի թիվ 34 արձանագրային որոշումները
2006թ. սեպտեմբերի 9	Դավթաշեն համայնքում ջերմամատակարարման վերականգնման ծրագրի իրականացման նպատակով ստեղծվեց «Դավթաշենի էներգակենտրոն» ՀԶ ՓԲԸ-ն
2006թ. հոկտեմբերի 10	Ջերմամատակարարման գույքը հանձնվեց Դավթաշենի թաղապետարանին Երևանի քաղաքապետի 10.10.2006թ. թիվ 1602-Ա որոշում

***Ծրագրի իրականացման ներկա վիճակը***

- «Դավթաշենի էներգակենտրոն» ՀԶ ՓԲԸ-ի կողմից կատարվել է հինգ ԿՁՀ-ների հին սարքավորումների ապամոնտաժումը:
- Պատվիրվել և ընթացքի մեջ է Դավթաշենի 1-ին և 4-րդ թաղամասերի ԿՁՀ-ից սնվող մոտ 30 բազմաբնակարան բնակելի շենքերի ջերմամատակարարման համակարգի նախագիծը:
- Ներկայումս ներդրողի կողմից տարվում են վարկային միջոցների հայթայթման աշխատանքներ:

ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից.

- մշակվել է բնակիչների հետ կնքվելիք ջերմային էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձև
- տեղեկանք կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ծրագրի մասին բնակիչների շրջանում բացատրական աշխատանք տանելու և նրանց իրազեկելու համար:

ՄԱԶԾ-ի տարածաշրջանային կենտրոնին ներկայացվել է հայտ Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմով (ՄՁՄ) Երևան քաղաքի ջերմամատակարարման վերականգնման առաջնեկային նախագծի հիմնավորման փաստաթղթերի մշակման տեխնիկական աջակցության համար:

ՄԶՄ ծրագրի ներքո Ընդունող երկրում իրականացվող ԶԳ արտանետումների կրճատման գործողությունների նշակմանը և իրականացմանն օժանդակման նպատակով պատրաստվում է Փոխընթացման հուշագրի ստորագրում Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի և Հայաստանի Հանրապետության միջև: